ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ. ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ. ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներում ներառվող առողջապահական ծառայությունների և նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության մշակում/վերանայում, ինչպես նաև դրանց հաշվարկում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ փորձարկման փուլի ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է առողջապահական տվյալների հավաքագրման և վերլուծության իրականացում համապատասխան մասնագետի ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով առողջապահական տվյալների վերլուծության իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հետ կապված առողջապահական տվյալների հավաքագրում և վերլուծություն, այդ թվում՝

1. Սքրինինգների իրականացման ռեսուրսների գնահատման հարցման արդյունքում ստացված տվյալների ներմուծում տվյալների բազա, բացահայտված սխալների կամ թերլրացումների դեպքում բժշկական կազմակերպությունների հետ տվյալների ճշգրտում և սխալների ուղղում:
2. Հավաքագրված տվյալների հիման վրա ըստ բժշկական կազմակերպությունների, հետազոտությունների, ծառայությունների ցանկերի պատրաստում, համապատասխանաբար բոլոր տվյալների ցուցադրմամբ:

3. Գների հաշվարկների համար կիրառվող մուտքային ձևերում տվյալների լրացումներ, համադրումներ տվյալների բազայի հետ:
4. Գների հաշվարկման գործիքում տվյալների ներմուծումների ապահովում, ճշտումների իրականացում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Մասնագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ ամսական հաշվատվություններ՝ աշխատանքի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև աշխատանքային նկարագրով սահմանված աղյուսակների լրացված և ճշգրտված տվյալների տրամադրում, գների հաշվարկման համար կիրառվող մուտքային ֆորմաներում կատարված փոփոխությունների, գների հաշվարկման գործիքում ներմուծված տվյալների վերաբերյալ պարբերական տեղեկատվության տրամադրում փորձագիտական թիմի ղեկավարին:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետն, ըստ անհրաժեշտության, առողջապահության ֆինանսավորման խորհրդատուի/թիմի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը, սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված, նաև պետք է պատրաստի պրեզենտացիա/ներ, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Բարձրագույն կրթություն կառավարման, տվյալների վերլուծության բնագավառում:
- Հայերենի, ռուսերենի և անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ՝ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և, ըստ անհրաժեշտության, ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: